Մրցույթ ՀՀ Տավուշի մարզի «Բերդի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի, տեխնոլոգիայի (8 դասաժամ), կենսաբանության (4 դասաժամ), համաշխարհային պատմության (2 դասաժամ), հայոց պատմության (2 դասաժամ), հասարակագիտության (2 դասաժամ), կերպարվեստի (6 դասաժամ), երաժշտության (6 դասաժամ), ֆիզկուլտուրայի (5 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- *դիմում (Ձև 1) ,*
- *մեկ լուսանկար 3x4 չափի,*
- *բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)*
- *անձը հաստատող փաստաթուղթ*
- *« Հանրակրթության մասին » ՀՀ օրենքի 26 – րդ հոդվածի 1- ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*
- *ինքնակենսագրություն (Ձև 5)*
- *այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ – ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*
- *ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,*
- *հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*
- *որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***հոկտեմբերի 5-ից մինչև 18-ը ներառյալ,ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:***

*Մրցույթը տեղի կունենա **2022թ. հոկտեմբերի 20-ին՝ժամը 14:00-ին**, ՀՀ Տավուշի մարզի հ.1 հիմնական դպրոցում, հասցեն՝ Տավուշի մարզ, Բերդ, Լևոն-Բեկի 1:*

Տեղեկությունների համար զանգահարել 094-81-35-71 հեռախոսահամարով: